□□□□□□□□□□ □□□□□□□□□□□,□□□□□□□ □□□□□□□□□ □ □□□ □□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□ □□

Սևերիանոսը († 320) նշանավոր զորավար էր Փոքր Հայքի Սեբաստիայի արքունի բանակում, Լիկիանոս կայսեր օրոք: Երբ «Հայկական լեգեոն» կոչված գնդի 40 քրիստոնյա զինվորները բանտարկվում են, Սևերիոսն այցելում է նրանց և հոգածություն ցուցաբերում: Նրանց նահատակությունից հետո էլ շարունակում է պաշտպանել քրիստոնյաներին և քննադատել օրվա իշխանավորներին, որոնք անտեղի հալածում են անմեղ քրիստոնյաներին: Սակայն կրկին դատական ատյան է բերվում, անլուր չարչարանքների ենթարկվում՝ արժանանալով մարտիրոսության պսակի:

Բաբելա Ծերունին († 298) ուսուցիչ էր Նիկոմիդիայում, Մաքսիմինոս կայսեր օրոք, որտեղ քրիստոնյա մանուկներին Սուրբ Գիրք էր ուսուցանում: Հեթանոսները կայսրին հայտնում են, որ նա երեխաներին Սբ. Գիրք և քրիստոնեական բարեպաշտություն է սովորեցնում: Կայսեր այն հարցին, թե՝ «Ինչո՞ւ ես երեխաներին օտար կրոն սովորեցնում և ոչ՝ մերը», ծերունին պատասխանում է. «Որովհետև ճշմարիտ հավատը քրիստոնեականն է»: Կայսեր հրահանգով ծերունին նետվում է բանտ և տանջանքների ենթարկվում: Նրանք փորձում են սիրաշահելով համոզել երեխաներին երկրպագել կուռքերին, սակայն ի պատասխան լսում են. «Մենք երբեք չենք երկրպագի անշունչ քարե արձանների»: Այս ամենից հետո ուսուցիչն աշակերտների հետ գլխատվում է:

□□□□□ □□□□□□□□□

28.10.2008
27.10.2009
28.10.2010
27.10.2011
30.10.2012
29.10.2013
28.10.2014
27.10.2015
27.10.2016
31.10.2017
30.10.2018
29.10.2019
27.10.2020
28.10.2021

27.10.2022
31.10.2023
29.10.2024
28.10.2025
27.10.2026
28.10.2027
31.10.2028
30.10.2029
29.10.2030